

ԻՍԿԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՀԱՄԵՍ ՉԼԻՆԵԼ՝ ՈՐՔԱՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ Է ՆԱԲԱՆ ԱՆՈՒՄ, ԱՅՆՔԱՆ ԱՎԵԼԻ Է ՆՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՐՁ ԴԱՌՆՈՒՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ՇԱՏ ԲԱՆ Է ՄՆՈՒՄ ԱՆԵԼՈՒ:

Ա.ՖԲԱՆՍ

Այս տարվանից սկսած՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ձեռնամուխ է լինում հայ արժանավոր իրավաբանների մեծարմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեծարվող իրավաբանները պետք է լինեն մասնագիտական բարձր գիտելիքների և բարոյական հատկանիշների տեր անձինք, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իր փնտրտույքը սկսեց իրավաբան գիտնականների շրջանում: Մոյն թվականի դեկտեմբերի քսանմեկին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Հայաստանի իրավունքի պատմության հանձնաժողովի որոշմամբ հայ իրավական ժառանգության ուսումնասիրման և լուսաբանման գործում մեծ ավանդ ունենալու համար պարգևատրեց իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր ԳԱՌՆԻԿ ՄԱՖԱՐՅԱՆԻՆ:

Այս նախաձեռնությամբ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից սկիզբ է դրվում մի շատ կարևոր նախաձեռնության, որը կդառնա շարունակական և հաջորդ տարիների ընթացքում այդ նախաձեռնության շրջանակներում կմեծարվեն ու կպարգևատրվեն լավագույն հայ փաստաբանները, դատավորները, դատախազները, իրավաբան գիտնականները և երիտասարդ իրավաբանները: Այն հնարավորություն կտա մեր հասարակությանը իրականում ճանաչել և զնահատել հայ արժանավոր իրավաբաններին:



ԼՐԱՅՈՒ

ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

«Իրավունք»-ը իր 07.12.2007թ.-ի համարում հարցազրույց էր անցկացրել «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության նախագահ, փաստաբան Կարեն Ջադոյանի հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցազրույցում ՀՀ արդարադատության համակարգի վերաբերյալ բարձրացված խնդիրներն ու հարցերը հրատապ են և արդիական, Իրավաբանական լրատուն հարցազրույցը ներկայացնում է նաև իր ընթերցողներին: Հարցազրույցը՝ էջ 4-5-ում:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԵՎՐՈԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԸ

Հայաստանի դեմ այս տարի Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացվել 597 հայց, որից 40-ը ճանաչվել է անընդունելի, 4-ի վերաբերյալ կայացվել է ընդունելիության որոշում, 4-ը հանվել է գործերի ցուցակից: Իսկ ընդհանուր առմամբ, մինչ այս տարվա դեկտեմբերի 15-ը, Մարդու իրավունքների եվրոպական դատարան Հայաստանի դեմ ներկայացվել է 983 հայց, որոնցից 243-ը ճանաչվել է անընդունելի: Համեմատության համար՝ Վրաստանի դեմ Եվրոպական դատարանը կայացրել է 9 վճիռ, իսկ հայցերի թիվը 2 անգամ ավելի է Հայաստանի դեմ ներկայացվածներից: Ադրբեջանի դեմ կայացվել է 6 վճիռ և շուրջ 20 որոշում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռների կատարման ուղղությամբ վերահսկողություն իրականացնում է Եվրախորհրդի նախարարների կոմիտեն, որտեղ 3 ամիսը մեկ անգամ բարձրացվում են վճիռների կատարման և չկատարման վերաբերյալ հարցերը: Եթե որևէ պետություն չի կատարում Եվրոպատարանի վճիռները, նրա անդամակցությունը Եվրախորհրդին կասեցվում է:

ՍԿՍԵԼ Է ԳՈՐԾԵԼ WWW.JESSUP.AM ՎԵՐ ԿԱՅՔԸ

2007թ.-ի դեկտեմբերից սկսել է գործել «Ֆ.Ջեսսպի անվան միջազգային իրավունքի դատախազ» մրցույթի հայաստանյան մրցավույլի պաշտոնական www.jessup.am վեբ կայքը: Վեբ կայքը անհրաժեշտ տեղեկատվություն է պարունակում «Ֆ.Ջեսսպի անվան միջազգային իրավունքի դատախազ» մրցույթի հայաստանյան և միջազգային մրցավույլերի վերաբերյալ:

«ԲԱՑ ԴՈՆԵՐԻ ՕՐԵՐ» ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատական դեպարտամենտի և ՀՀ կրթության և գիտության նախարարության համատեղ ջանքերի շնորհիվ անցկացվեցին «Բաց դռների օրեր» Հայաստանի դպրոցականների համար: 2007թ.-ի դեկտեմբերի 18-ին ՀՀ մարզերի առաջին ատյանի դատարաններ, դեկտեմբերի 19-ին՝ Երևան քաղաքի համայնքների առաջին ատյանի դատարաններ, ինչպես նաև վերաքննիչ դատարաններ այցելեցին հանրապետության բարձր դատարանի աշակերտները: Դպրոցականները դատարաններում հանդիպեցին դատավորների, դատական ծառայողների հետ, ներկա գտնվեցին քաղաքացիական և քրեական գործերով դատաքննությունների: Դպրոցականներին ներկայացվեցին ՀՀ դատական համակարգը, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքով նախատեսված փոփոխությունները, որոնք պետք է գործեն 2008թ.-ի հունվարի մեկից:

ՄԱՆԻԿԱՐ

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՇՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ ԸՆԴՈՒՄ

ԳԻՏԱԺՈՂՈՎ



ԿԱՅԱՅԱԿ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՇՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ ԸՆԴՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2007թ.-ի դեկտեմբերի 5-ին Երևան հյուրանոցում կայացավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի, Հայաստանի իրավաբանական հիմնադրամի և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության կողմից

կազմակերպվող «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական չորրորդ գիտաժողովի բանավոր փուլը: Գիտաժողովն արդեն կայացած ավանդույթ է և նպատակ ունի փաստաբանության բնագավառում բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը, խրախուսել նրանց կողմից լուրջ ուսումնասիրությունների իրականացումը, նպաստել ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի դերի բարձրացմանը, ինչպես նաև թույլ է տալիս լսել նոր գաղափարներ և լուծումներ, որոնք առաջարկվում են նոր սերնդի երիտասարդ իրավաբանների կողմից:

Գիտաժողովը բաղկացած էր 2 փուլից՝ գրավոր և բանավոր: Գիտաժողովին մասնակցելու հայտ էին ներկայացրել 28 ուսանողներ՝ Երևանից և ՀՀ մարզերի իրավաբանական բուհերից և բուհերի իրավաբանական ֆակուլտետներից: Գիտաժողովի գրավոր փուլին մասնակցեցին սահմանված ժամկետներում կազմակերպիչներին իրենց զեկույցները ներկայացրած 8 իրավաբան ուսանողներ: Ներկայացված չորս լավագույն աշխատանքների հեղինակները իրավունք ստացան մասնակցել բանավոր փուլին, որի ընթացքում հանդես եկան իրենց զեկույցներով: Ձեկույցողները բանավոր փուլի ընթացքում ներկայացրեցին իրենց աշխատանքները, որոնցում անդրադարձել էին փաստաբանական ինստիտուտին, գործող օրենսդրությանը, վեր էին հանել դաշտում առկա թերություններն ու բացթողումները՝ առաջարկելով իրենց տեսակետները դրանց վերացման ուղղությամբ: Երիտասարդ իրավաբանների ելույթները գնահատվում էին հեղինակավոր իրավաբաններից և փաստաբաններից կազմված ժյուրիի կողմից:

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական չորրորդ գիտաժողովի «Լավագույն գրավոր զեկույց» մրցանակին արժանացավ և ընդհանուր արդյունքներով գիտաժողովի չորրորդ մրցանակին արժանացավ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի երկրորդ կուրսի ուսանողուհի Նաիրա Դիլանյանը: Գիտաժողովի երրորդ մրցանակին արժանացավ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի երկրորդ կուրսի ուսանողուհի Մարիամ Օսիպյանը: Երևանի «Գլաձոր» համալսարանի երրորդ կուրսի ուսանող Իգոր Ավագյանը արժանացավ գիտաժողովի երկրորդ և ՀԵԻԱ-ի նախագահ Կարեն Զաղոյանի կողմից սահմանված հատուկ մրցանակներին: Իսկ գիտաժողովի հաղթող և լավագույն հոետոր ճանաչվեց Գավառի պետական համալսարանի հինգերորդ կուրսի ուսանողուհի Վարդուհի Բաղալյանը: Գիտաժողովի հաղթողները ստացան արժեքավոր մրցանակներ: Գրավոր փուլի մյուս մասնակիցները ևս արժանացան խրախուսական մրցանակների:

Գիտաժողովի բանավոր փուլը լուսարանվեց «ԱԲ» հեռուստաընկերության, Հայաստանի հանրային ռադիոընկերության, «Ազատություն» ռադիոկայանի, «Հայաստանի Հանրապետություն» և «Հետաքննություն» թերթերի կողմից:

Գիտաժողովի արդյունքում տպագրվեց «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական գիտաժողովի 4 լավագույն զեկույցները ներառող գիտաժողովի նյութերի ժողովածուն:



«ԸՍՏ ՄԻՏԻՔԱՐ ԳՈՇԻ՝ ԴՍԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՇԱՅՏՈՒՄԸ, ՄԱՐԿԱՆՑ ՄԻՋԻՑ ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼԸ, ՆՐԱՆՑ ՇԱՄԵՐԱՇԽԵՑՆԵԼԸ...»

Տարբեր աղբյուրների համաձայն՝ կոռուպցիա բառը առաջացել է լատիներեն corrumpere - փչացնել և corruptio -կաշառում բառերից: Կոռուպցիան ցանկացած հասարակության և պետության համար մեծ վտանգ ներկայացնող երևույթ է: Այն համառոտ կարելի է բնորոշել որպես պաշտոնատար անձի կողմից իր իրավունքների և իշխանական լիազորությունների կիրառում՝ անձնական օգուտից ելնելով: Կոռուպցիան հանգեցնում է կոնֆլիկտի պաշտոնատար անձի գործողությունների և իրավունքի նորմերի, հասարակության շահերի միջև: Մակրոտնտեսական և քաղաքատնտեսական վերլուծություններին համաձայն՝ կոռուպցիան տնտեսության զարգացման մեծագույն խոչընդոտներից մեկն է, որը կարող է լրջորեն վտանգել ցանկացած վերափոխումները: Ցավոք սրտի կոռուպցիան համաշխարհային երևույթ է: Այն առկա է գրեթե բոլոր պետություններում, ուղղակի որոշ պետություններում այն չնչին է, իսկ որոշ պետություններում՝ մեծ մասշտաբների է հասել և խորը արմատներ թողել: Կոռուպցիան անպատժելիության մթնոլորտի ձևավորման համար պարարտ հող է հանդիսանում՝ դրանով խոչընդոտելով ցանկացած պետության որպես ժողովրդավարական և իրավական պետության կայացմանը: Կոռուպցիայի առկայությունը դպրոցական և բուհական համակարգում լուրջ խոչընդոտ է կրթված և բարոյական նկարագիր ունեցող սերունդներ ունենալու համար: Հանրահայտ է, որ ցածր կրթական ցեղ լուրջորեն և ոչ պրոֆեսիոնալ պաշտոնյաները ի վիճակի չեն արդյունավետ կառավարել և պահպանել մարդու իրավունքները: Այս ամենի գիտակցումը հանգեցրեց լավ կառավարման հայեցակարգի ձևավորմանը: Լավ կառավարումը իր մեջ ներառում է իրավունքի գերակայություն, պետական ապարատի



գործունեության արդյունավետություն, թափանցիկություն, հաշվետվողականություն, մարդու իրավունքների, մարդկային արժանապատվության հարգում, որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների իրական մասնակցություն: Լավ կառավարման գաղափարը շատ է կարևորվում ունիվերսալ և տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների կողմից և նույնացվում է մարդու իրավունքների և ժողովրդավարության հետ: Նշեն, որ 2000թ. սեպտեմբերի 8-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատված Հազարամյակների հռչակագրի 5-րդ բաժինը կոչվում է «մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և լավ կառավարումը»:

Կոռուպցիան պատմականորեն ձևավորված երևույթ է: Նրա այս կամ այն դրսևորումները առկա են եղել հնագույն ժամանակներից: Կոռուպցիայի պատմական ակունքները, հավանաբար, սկիզբ են առնում բարեհաճ մոտեցմանը արժանանալու նպատակով նվերներ մատուցելու սովորույթից: Թանկ նվերը տարբերում էր մարդուն այլ խնդրողներից և նպաստում էր, որ նրա խնդրանքը բավարարվի: Ուստի նախնադարյան հասարակություններում քրմին կամ ցեղապետին վարձի վճարումը սովորական էր: Պետական կառավարման համակարգի բարդացմանը և կենտրոնացված իշխանության անրապնդմանը զուգահեռաբար առաջացան պետական պաշտոնյաներ, որոնք պետք է աշխատեին սահմանված վարձատրության դիմաց: Մակայն գործնականում պաշտոնյաները ձգտում էին, օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը, թաքնված կերպով ավելացնել իրենց եկամուտները:

Wikipedia.org ինտերնետային հանրագիտարանի համաձայն՝ առաջին տիրակալը, որի մասին պահպանվել են տեղեկություններ որպես կոռուպցիայի դեմ պայքարողի՝ Լաղաշ քաղաք-պետության շումերական թագավոր Ուրուկագինան էր, որը կոռուպցիայի համար ցուցադրական և հաճախ բավականին դաժան պատժամիջոցներ էր կիրառում: Մակայն այդ ամենը չէր նվազեցնում պետական գումարների մանր չափերով վատնումը, յուրացումը և կաշառակերությունը, որոնք զանգվածային բնույթ էին կրում: Նույն աղբյուրի համաձայն՝ մ.թ. 4-րդ դարում Բիսարատայի (Հնդկաստան) նախարարներից մեկը Կաուտիլյա կեղծանվան տակ հրապարակված «Արտիշաշաստրա» իր աշխատությունում նշում է, որ թագավորի ունեցվածքը նույնիսկ փոքր ծավալներով չի կարող չյուրացվել նրանց կողմից, ովքեր տնօրինում են այդ ունեցվածքը:

Կոռուպցիոն դրսևորումների անթուլատրելիության

վերաբերյալ բազմաթիվ դրույթներ ամրագրված են նաև հայ իրավական հուշարձաններում: Օրինակ Գրիգոր Լուսավորչին վերագրվող կանոններում (301-325թթ.) ամրագրված է. «Եթե քահանան կամ աշխարհականը կաշառք առնի, թող Սիմոն կախարդի անեծքը վրան թափվի, Հուդայի կցորդ լինի, նույնպես և Գեեզ բորոտին»: Դավիթ Այվակաորու Կանոնագրքի (1130թ.) 97-րդ հոդվածը նվիրված է չար առաջնորդներին և քահանաներին: Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական» աշխատությունում (1166թ.) դիմելով իշխանավորներին՝ ասում է. «Անիրավությանը մի դատեք որևէ մեկին, այլ ուրիշ դատաստան արեք, որպեսզի Աստված էլ ձեզ քաղցրությամբ դատի և ոչ խստությամբ: Կաշառքը, կողմերից մեկին սիրելը, ատելությունն ու ռիսկալությունը կամ որևէ մեկից սպասվելիք պատիվը թող պատճառ չլինեն, որ դատի ժամանակ անիրավին արդարացնեք և արդարի իրավունքները խեղաթյուրեք, որպեսզի սրանց պատճառով ձեր հոգիները արժանի չլինեն Աստծո օրինաց անեծքին»: Դատարանների գործունեությանը և դատավորի կեցվածքին վերաբերող բավականին առաջադեմ նորմեր են ամրագրվել նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում (1184թ.): Ըստ Գոշի՝ դատարանի հաստատվել պետք է լինի արդարության բացահայտումը, մարդկանց միջից խոշտությունը վերացնելը, նրանց համերաշխեցնելը, իսկ դատավորը պետք է օժտված լինի և տեսական գիտելիքներով, և աշխատանքի փորձ ունենա, որպեսզի անսխալ վարի դատական գործը: Դատավորը պետք է չափահաս լինի, գիտակ, անկաշառ, որպեսզի սխալ որոշում չկայացնի և համարձակ լինի դատարանում ու արդար և այլն: Ըստ նրա՝ դատավարությունը պետք է ընթանա մրցակցային սկզբունքով և վկաների ներկայությամբ: Արդար և անկողմնակալ դատավարության վերաբերյալ դրույթները տեղ են գտել նաև Կիլիկիո Սպարապետ Մմբատի Դատաստանագրքում (1265թ.): Ինչպես տեսնում ենք կոռուպցիան դարերից եկող և դարեր զնացող երևույթ է: Մակայն դա չի նշանակում, որ պետք է հանդուրժել այն: Ինչպես նշվեց, կոռուպցիան շատ վտանգավոր է ցանկացած հասարակության և պետության համար, ուստի պետք է գտնել օպտիմալ տարբերակ այդ երևույթը հնարավորինս չափով նվազեցնելու համար:

«ԵՐԿՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՐԱԺԵՏ Է ՍԿՍԵԼ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ»

ԿԱՐԵՆ ՀԱԴՈՅԱՆ

«ԼԻԳ-Լ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության նախագահ, փաստաբան

-Արդարադատության ոլորտում իրականացվելիք երկրորդ սերնդի բարեփոխումների մասին այսօր հաճախ է խոսվում, ի՞նչ է այն ենթադրում:

-Այո, այսօր շատ է խոսվում երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման անհրաժեշտության մասին, դրանց կարիքն ունեն և դրանց սպասում են մեր երկրի քաղաքացիները: Երկրորդ սերնդի բարեփոխումներ ասելով հիմնականում պետք է հասկանալ երկրի պետական համակարգում կոռուպցիոն ու հովանավորչական ռիսկերի կտրուկ նվազեցում և տնտեսության բնագավառում առողջ մրցակցային միջավայրի ապահովում: Սրանք այն հիմնական և անհապաղքայլերն են, որոնց իրականացմանը սպասում է մեզանից յուրաքանչյուրը: Երկրորդ սերնդի բարեփոխումների համատեքստում առավել կարևորվում է արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացումը, որտեղ ամենամեծ խնդիրը դատարանների իրական անկախության ապահովումն է: Անկախություն, որի շնորհիվ հնարավոր է արդյունավետ և լիարժեք իրականացնել արդարադատությունը, որն էլ հնարավոր կդարձնի ապահովել քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ խախտված իրավունքների վերականգնումը: Իրականում այսօր ՀՀ արդարադատության համակարգը խորքային բարեփոխումների կարիք ունի: Բարեփոխումներ, որոնք մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացու համար կբերեն հույս, վստահություն ու հավատ: Իսկ այդպիսի բարեփոխումներին քարոզ շունչ և ոգի կարող են հաղորդել միայն նոր սերնդի իրավաբանները, ովքեր ունեն մասնագիտական բարձր որակավորում, բարոյական անխոցելի նկարագիր և համապատասխան կամք մեր երկրի արդարադատության համակարգի առողջացման նպատակով իրականացնելու անշրջելի բարեփոխումներ: Եվ այս առումով սխալված չենք լինի՝ կրկին ասելով, որ այսօրվա հրամայականն է Հայաստանում իրականացնել երկրորդ սերնդի բարեփոխումներ և այդ բարեփոխումների իրականացումը սկսել արդարադատության համակարգից:

-Այս համատեքստում ինչպիսի՞ բարեփոխումների անհրաժեշտություն ունի փաստաբանական ինստիտուտը:

-Այսօր այս ինստիտուտում նույնպես առկա են հրատապ լուծում պահանջող մի շարք հիմնախնդիրներ: Առաջին հերթին անհրաժեշտ է բարեփոխել փաստաբանության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը, մասնավորապես, փաստաբանական գործունեության: Այս խնդրի լուծման համար որպես առաջին քայլ անհրաժեշտ է «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ հնարավորություն տալով փաստաբաններին և փաստաբանական գործունեությանը զբաղվող իրավաբանական ընկերություններին՝ իրենց գործունեությունը հարկել պարզեցված հարկով, տարվա իրացման շրջանառության քսան տոկոսի չափով, ինչպես նաև չսահմանափակելով մատուցված փաստաբանական ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարի չափը: Այս ամենը ներկայումս կիրառվում է խորհրդատվական ծառայություններ մատուցող նոտարների գործունեության նկատմամբ, և անհասկանալի է, թե ինչու չպետք է կիրառվի նաև փաստաբանական գործունեության նկատմամբ: Հակառակ պարագայում անհասկանալի է դառնում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված խտրական մոտեցումը:



-Ստացվում է, որ օրենսդրական դաշտն այս ոլորտում սողանքե՞ր ունի:

-Օրենքների կատարելագործման առումով բավական աշխատանքներ պետք է իրականացվեն, չնայած, բազային առումով, փաստաբանության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում հիմնական լուծումներն արդեն տրված են: Մասնավորապես, 1998-ին ընդունվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, իսկ 2004-ին այդ օրենքը փոխարինվեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով:

-Օրենքներն ընդունվել են, բայց արդյոք դրանք ծառայո՞ւմ են իրենց ճիշտ նպատակին:

-Իմ կարծիքով՝ մեզանում մեծ խզում կա օրինաստեղծ գործունեության և իրավակիրառական պրակտիկայի միջև: Երկրորդ սերնդի բարեփոխումների ողջ տրամաբանությունն էլ պայմանավորված է նրանով, որ, երբ առաջին փուլում ձևավորվեց արդարադատության ոլորտը կարգավորող իրավական դաշտը, ապա երկրորդ փուլում անհրաժեշտ է դրսևորել համապատասխան կամք և անշեղ կիրառել արդեն ընդունված օրենքները: Այս առումով նաև պետք է արձանագրել, որ արդարադատության ոլորտում օրենքները կիրառող մարմինների գործունեության մեջ առկա են բավական մեծ կոռուպցիոն ռիսկեր, որոնք մտահոգելու, խորհելու և երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման ընթացքում դրանց կտրուկ նվազեցնելու անհրաժեշտության տեղիք են տալիս:

-Իսկ այս առումով ո՞րն է ՀՀ փաստաբանների պալատի հիմնական դերակատարությունը:



-Այս առումով կարևորում են նաև ՀՀ փաստաբանների պալատիդերը կարծում են, որ այն պետք է լուծի հետևյալ խնդիրները: Առաջին հերթին փաստաբանների պալատը պետք է ստեղծի համապատասխան պայմաններ՝ փաստաբանների մասնագիտական գործունեության իրականացման համար, ինչպես նաև զբաղվի փաստաբանության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխումների հարցերով: Երկրորդ՝ փաստաբանների պալատը պետք է պաշտպանի իրանդամների իրավունքները և օրինական շահերը պետական և ոչ պետական մարմինների հետ հարաբերություններում, այդ թվում՝ դատաբաններում: Երրորդ՝ պետք է զբաղվի փաստաբանների ուսուցման և վերապատրաստման հարցերով՝ այդ գործառույթը պատվիրակելով նեղ մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպություններին: Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ փաստաբանների պալատը պետք է կատարի իր ամենօրյա վերահսկողության գործառույթը, որպեսզի իր անդամները չխախտեն փաստաբանի վարքագծի կանոնները: Պալատը կարգապահական հանձնաժողովի միջոցով պարտավոր է ի հայտ բերել փաստաբանների կողմից կատարված խախտումները, իսկ վայ-փաստաբաններին էլ հեռացնել իր շարքերից՝ նպաստելով որակյալ և բարոյական բարձր նկարագրի տեր փաստաբաններից կազմված ընտանիքի զարգացմանը:

-Ձեր կարծիքը հավատարմագրված փաստաբանի և դատաբանների կողմից փաստաբանների նկատմամբ կիրառվող սանկցիաների ինստիտուտների վերաբերյալ:


-Փաստաբանությունը գրեթե վերջերս էր ձերբազատվել հատուկ արտոնագիր ունեցող և վճարելի դատարանում գրանցված փաստաբանների անհեթեթ և անհիմաստ ինստիտուտից, երբ դատաիրավական բարեփոխումների քողի ներքո, այս անգամ վճարելի դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի անվան տակ այն կրկին պարտադրվեց փաստաբաններին: Սարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից նույնպես այն հարված էր մեր երկրի շարքային քաղաքացուն, քանի որ նրա համար վճարելի բողոք ներկայացնելն այսուհետև դարձավ գրեթե անմատչելի ու անհասանելի: Հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի ներդրմամբ էականորեն նվազելու է հայրենի արդարադատության իրականացման արդյունավետությունը՝ մեծացնելով այս ոլորտի կոռուպցիոն ռիսկերի մակարդակը: Փաստաբանական ինստիտուտի զարգացման ներկա փուլի մյուս խոչընդոտը դատական սանկցիաների ինստիտուտի ներմուծումն էր: Այսուհետև դատավորները օրենքով նախատեսված սանկցիաների միջոցով կզսպեն իրենց վստահողների և իրենց իրավունքների իրականացման համար մինչև վերջ պայքարող փաստաբաններին՝ դրանով իսկ նպաստելով «կանխատեսելի և կառավարելի» փաստաբանների որակական մեծամասնություն կազմող տեսակի զարգացմանը: Այս իրավիճակից դուրս գալու միակ ելքը փաստաբանների ուժեղ և հզոր ինստիտուտ ունենալն է՝ իր պրոֆեսիոնալ ղեկավար անձնակազմով, անձնակազմ, որը կարող է համապատասխան խիզախություն և կամք գուցաբերել անկախ փաստաբանական ինստիտուտի զարգացման անշրջելիությունն ապահովելու համար:

-Ձեր կարծիքով ինչու՞ հասարակությունն այսօր չի վստահում ՀՀ դատաբաններին:

-Այո, ես համաձայն եմ, որ հասարակությունն այսօր, ցավոք, հայրենի դատաբանների նկատմամբ չունի համապատասխան վստահության պաշար: Իհարկե, այս ամենը ձևավորվել է խորհրդային տարիների

ընթացքում և ինքնաշարժ շարունակվում է մինչև օրս: Ո՛ր նաև միանշանակ է, որ առանց օբյեկտիվ հիմքերի նման վերաբերմունք չէր ձևավորվի մեր հասարակության կողմից: Յուրաքանչյուր քաղաքացի իր երկրում կարող է ապրել իր համար կենսական դժվար և վատթար պայմաններում միայն այն դեպքում, երբ համոզված է, որ դրանք անցողիկ են՝ իր մտքում ունենալով այն վեհ արժեքներն ու գաղափարները, որոնց համար կրում է ժամանակավոր այդ դժվարությունները: Քաղաքացին, ապրելով վատ պայմաններում, պետք է համոզված լինի, որ իր հայրենիքում յուրաքանչյուր վայրկյան կարող է գտնել իր արդարությունը: Նույն քաղաքացին չի կարող ապրել արժանապատիվ կենսական պայմաններում, եթե սեփական երկրում չկարողանա տեր կանգնել և պաշտպանել իր սեփական իրավունքները, սատար կանգնել իր ընտանիքի, մտերիմների ու ընկերների խախտված իրավունքների օրինական վերականգնմանը: Այս պարագայում քաղաքացին իրեն կզգա լքված, անպիտան իր հայրենի բնօրրանում, և նույնիսկ Սարդու իրավունքների եվրոպական դատարանից ակնկալվող արդարությունը, նյութական ու բարոյական վնասների հատուցումը ոչ մի դեպքում չեն կարող փոխարինել այն արդարության զգացողությանը, որը քաղաքացին կարող էր գտնել սեփական հայրենիքում: Այս առումով և՛ դատաբանները, և՛ փաստաբանական ընկերությունները, և՛ իրավապահ մարմինները պետք է դրսևորեն համապատասխան կամք ու ձեռնարկեն գործուն քայլեր հայրենի երկրում արդարություն փնտրող յուրաքանչյուր քաղաքացու հույսն ապահովելու համար: Իսկ եթե վերլուծենք «արդարադատություն» բառը, ապա այն բաղկացած է «արդար» հոգևոր բնագավառի, և դատ, դատել՝ իրավական բնագավառի երկու փոխկապակցված տարրերից: Առանց որևէ մեկի առկայության արդարադատության համակարգը չի կարող լինել լիարժեք և արդյունավետ գործող: Յուրաքանչյուր դատավոր պարտավոր է կրել նշված երկու արժեքները: Չմոռանալով, որ հայ միջնադարյան իրավական ակտերում մեր մեծ նախնիների կողմից ամրագրվել են արդարադատության մի շարք սկզբունքներ և սահմանվել են համապատասխան չափանիշեր դատավորի մասնագիտական ու բարոյական նկարագրի վերաբերյալ, որն այսօր նույնպես արդիական է: Այս առումով արդարադատության համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումներն այլընտրանք չունեն: Ավելորդ չեն համարում ևս մեկ անգամ կրկնել, որ հասկանալի պատճառներով այդ բարեփոխումները պետք է իրականացնեն նոր սերնդի իրավաբանները, ովքեր դրանց իրականացման համար կցուցաբերեն համապատասխան կամք և վճռականություն՝ կրողը լինելով մասնագիտական բարձր գիտելիքների ու բարոյական հատկանիշերի: Պարզ է ևս մեկ կարևոր հանգամանք. երկրորդ սերնդի դատաիրավական բարեփոխումների իրականացումը կհանդիպի դատաիրավական ներկայիս համակարգի որոշակի հակազդեցությանը: Հակազդեցություն, որը հեշտ հարթահարելի է համապատասխան քաղաքական կամքի և հետևողական պայքարի շնորհիվ:

ՂԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԸԱՃԱԽԱԿԻ ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՊԵՏԶ Է ԱՆՑՆԵԼ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԸԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ



Պետությունը, որպես սոցիալական երևույթ, որպես հասարակության զարգացման արդյունք, ստեղծվել է պաշտպանելու մարդու իրավունքները: Ժամանակակից ժողովրդավարական ու իրավական պետության կարևորագույն բնութագրիչ չափանիշ է հանդիսանում այդ պետությունում իրավունքի գերակայությունը, դրանից բխող՝ մարդու իրավունքների պաշտպանության գործուն միջոցների առկայությունը և պաշտպանվածության աստիճանը: Մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է լինի իրավական պետության առջև դրված մշտական նպատակ-խնդիր: Իրավունքների հաջող իրականացման երաշխիքներից մեկը գործուն և արդյունավետ պաշտպանության համակարգի գոյությունն է: Այդ համակարգում առաջատար դերը պատկանում է դատական պաշտպանության մեխանիզմին, քանի որ դատական իշխանության ձևավորումը, ինչպես նաև գործերի դատական քննության կարգը, որպես կանոն, ապահովում են վեճերի առավել օբյեկտիվ և արդար լուծումը, խախտված իրավունքների վերականգնումը:

Մարդու իրավունքների պաշտպանության ամենարդյունավետ միջոցը դարերի վերահամարվել է և յսօր էլ բոլոր քաղաքակիրթ, իրավական, ժողովրդավարական երկրներում համարվում է դատական պաշտպանությունը: Այս հանգամանքը պայմանավորված է դատարանի՝ պետական մարմինների կառուցակարգում և ընդհանրապես հասարակությունում ունեցած տեղով և դերով, դատական իշխանության իրականացման սկզբունքներով: Եվ հենց դատարանների ինքնուրույնությունն ու անկախությունն էլ հանդիսանում են այն հիմքը, որով դատարանները կարողանում են երաշխավորել մարդու իրավունքների հուսալի պաշտպանություն:

Սակայն իրենց առջև դրված մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունը դատարանները կարող են իրականացնել, անձն էլ իր իրավունքները կարող է պաշտպանել միայն դատարանների իրական անկախության ու «բարենպաստ» դատավարական օրենսդրության առկայության պայմաններում:

ՀՀ քաղաքացիներն այլևս անհիմաստ համարելով արտադատական միջոցներով իրենց իրավունքների պաշտպանության դիմելը՝ իրենց իրավունքների պաշտպանության դեռևս սպարող հույսը փորձում էին արդարացնել արդարադատության միջոցով: Դատարանները, կրելով արդարադատության իրականացման առաքելությունը, կրում են նաև մարդու իրավունքների պաշտպանության «բեռը»:

Նորաստեղծ ժողովրդավարական երկրի նորաստեղծ դատական համակարգը պետք է կայանա՝ կատարելագործելով այդ ոլորտը կարգավորող օրենսդրությունը, համապատասխանեցնելով

այն միջազգային հանրության կողմից վաղուց ընդունված չափանիշներին, որոնք առավելագույնս հնարավորություն են տալիս պաշտպանել մարդուն ու նրա իրավունքները՝ որպես բարձրագույն արժեքների:

Հայաստանի դատաիրավական ոլորտում արդեն մեկ տասնամյակ ընթացող բարեփոխումները, որքան էլ

դրանք հաճախակի են, փոխարենը նպաստելու մեր երկրում դատաիրավական համակարգի ու արդարադատության կայացմանը, ստեղծում են նորանոր դժվարություններ իրավունքների պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիների ու նրանց շահերի պաշտպանությունն ստանձնած ներկայացուցիչների համար:

Գործող եռաստիճան դատական համակարգը, որն անձին երկրորդ հնարավորություն էր տալիս իր խախտված իրավունքների պաշտպանության՝ վերաքննության կարգով գործը ըստ էության կրկնակի քննելու միջոցով, և ևս մեկ հնարավորություն՝ գործին մասնակցող անձանց նյութական կամ դատավարական իրավունքի խախտման դեպքում, համարվեց անարդյունավետ, քանի որ, որպես կանոն, վերաքննության կարգով ըստ էության քննվում էին գրեթե բոլոր գործերը: Պատճառը առաջին ատյանի դատարանի նկատմամբ ձևավորված անվստահությունն է և երեք դատավորի կազմով գործի եռակի արդարացի քննության հույսը: Ինչպես ամեն ինչ, այնպես էլ առաջին ատյանի դատարանների նկատմամբ ձևավորված անվստահությունը ևս ունի իր պատճառը, այն է որոշ դատավորների անտարբեր մոտեցումը գործի քննությանը՝ սկսած կոնկրետ ժամի նշանակված դատական նիստին 40-50 րոպե տևողությամբ սպասումներից: Այդ իսկ պատճառով հասարակությունում ձևավորվել էր կարծիք առաջին ատյանի դատարանի գոյության ոչ անհրաժեշտության («անպիտանության») մասին:

Դատական համակարգում «ոչ պիտանի» օղակը վերացնելու նպատակով էական փոփոխություններ կատարվեցին ՀՀ դատական համակարգում:

Նախ՝ փոխվեցին ՀՀ Վճռաբեկ դատարանի լիազորությունները՝ գործը բողոքի շրջանակներում քննող դատարանից վերափոխելով այն նախադեպ ստեղծող դատարանի:

Այնուհետև, 2007թ.-ի ՀՀ Դատական օրենսգրքով փոխվեց նաև ՀՀ Վերաքննիչ դատարանի դերը. այն գործը ըստ էության կրկնակի քննող դատարանից վերածվեց նախկին

Վճռաբեկ դատարանի գործառույթներն իրականացնող դատարանի:

Օրենսդրական լուրջ նորամուծություններ նախատեսում են ՀՀ քաղաքացիական ու քրեական դատավարության օրենսգրքերի փոփոխությունները և նոր ՀՀ վարչական օրենսգիրքը, որոնք ուժի մեջ են մտնելու 2008թ.-ի հունվարի 1-ից:

Վերոնշյալ «ոչ պիտանի» օղակի գոյությունը շտկելու համար դատաիրավական նոր փոփոխությունները, մասնավորապես փոփոխված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, էականորեն սահմանափակել է գործը Վերաքննության կարգով քննելու հնարավորությունները:

Նախ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանի՝ գործն քստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է ընդունվել քննության այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններում, շարունակելով գնահատողական հասկացությունների օգտագործման տրամաբանությունը, «ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալ կարող է առաջացնել ծանր հետևանքներ»՝ ձևակերպմանը ավելացվեցին ևս մի քանիսը, օրինակ, «նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտումներ», «արդարադատության բուն էության խաթարում» և այլն:

Նույն օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Եթե կողմերը առաջին ատյանի դատարանում կնքել են վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, ապա մնան համաձայնություն կնքած կողմի (կողմերի) ներկայացրած վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանի կողմից ենթակա է քննության միայն մնան համաձայնություն կնքած մյուս կողմի՝ համաձայնության դեպքում»:

Այս դրույթի պրակտիկ կիրառումը խիստ կասկածելի է: Մարդու իրավունքների դատական պաշտպանության իրավունքը բացարձակ իրավունք է, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով: ՀՀ Սահմանադրության 43-րդ և 44-րդ հոդվածներով նախատեսվում է մի շարք իրավունքների սահմանափակման հնարավորությունը օրենքով (օրենքով սահմանված կարգով), այն էլ հստակ սահմանված հիմքերի առկայության դեպքում, որոնց ցանկում իրավունքների դատական պաշտպանության իրավունքը ընդգրկված չէ: Այսինքն՝ իրավունքների դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը բացառում է նույնիսկ ՀՀ Սահմանադրությունը: Սակայն եթե անձը, վստահելով արդարադատությանը և մյուս կողմին, կնքում է «առաջին ատյանի դատարանում վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն», և օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով համաձայն չի լինում առաջին ատյանի դատարանի վճռի հետ, ապա արդեն իսկ գրկվում է վերաքննության կարգով իր գործի դատական քննության իրավունքից, քանզի վերաքննիչ բողոքի քննությունը վերաքննիչ դատարանի կողմից կախված է մյուս կողմի հայեցողությունից: Ստացվում է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի սահմանափակումը բացառում է նույնիսկ Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքը, կարող է սահմանափակվել մեկ այլ անձի կողմից:

Արդարադատության հնարավորությունից օգտվելու մեկ այլ սահմանափակում նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետով, համաձայն որի՝ «Գույքային պահանջով քաղաքացիական գործերով վերաքննությունը թույլատրելի է միայն, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը»:

Ստացվում է, որ մարդու իրավունքները կարելի է բաժանել երկու խմբի՝

1. իրավունքներ, որոնց խախտման վերացման ճանապարհին թույլ տրված սխալը կարելի է ուղղել, 2. իրավունքներ, որոնց խախտումը վերացնելը «պարտադիր չէ», եթե այդ իրավունքների «գինը» չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը, այսինքն՝ 50 000 ՀՀ դրամը:

Այս և նմանատիպ նորամուծություններին մնում է ավելացնել միայն դատարանին բացարկ հայտնելու ինստիտուտի վերացումը, քաղաքացիական դատավարությանը մասնակցող անձանց կողմից (հատկապես ներկայացուցիչների կողմից) բացատրություն տալու փոխարեն ցուցմունք տալու ինստիտուտի ներմուծումը, ապացույցները մինչև դատաքննությունը գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտելու պարտականությունը, որոնք էականորեն հակասում են քաղաքացիական դատավարությանը բնորոշ մրցակցության ու տնօրինչականության սկզբունքներին, և արդարադատության վերաբերյալ պատկերացումը կղառնա ամբողջական:

Նմանատիպ դրույթները ամբողջությամբ խեղաթյուրում են քաղաքացիական դատավարության էությունը, քանզի քաղաքացիական դատավարությունում դատարանի խնդիրը կողմերի ներկայացրած ապացույցների հիման վրա ճշմարտության բացահայտումն է, այլ ոչ թե ի պաշտոնե օբյեկտիվ իրականության բացահայտումը:

Մարդու իրավունքների դատական պաշտպանության կարևորագույն նախապայմանը բարենպաստ օրենսդրության առկայությունն է, այնուհետև՝ իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը այդ օրենսդրության տառին համապատասխան: Փորձադաշտ չդարձնելով մեր դատական համակարգը և նրա միջոցով պաշտպանվելու հնարավորություն ունեցող մարդուն ու նրա իրավունքները, հաճախակի նորամուծություններից պետք է անցնել արմատական փոփոխությունների, այն է՝ արդարադատության համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումներին՝ հաշվի առնելով հասարակության ու պրակտիկ իրավակիրառողների արձագանքները, իրավաբանական և իրավապաշտպան կազմակերպությունների գնահատականները, ինչի արդյունքում միայն կարելի է վերականգնել հասարակության կորսված վստահությունը պետության, դատական իշխանության ու արդարադատության նկատմամբ:

ԱՐՓԻՆԵ ԵՂԻԿՅԱՆ

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի վարչության անդամ, փաստաբան



Յյուրիխում 1280թ. հացթուխների գիղիան մի հացթուխի հետևյալ պատժին է արժանացնում. նրան մատնեցնում են զանբյուրում և կախում աղտեղություններով լցված փոսի մեջ: Գիշերը դատապարտյալը, չիմանալով, թռչում է փոսի մեջ և, կեղտի մեջ կորած, խայտառակված վերադառնում տուն: Դա այնքան նվաստացուցիչ էր մարդու համար, որ նա վառում է դատական կոլեգիայի անդամների բնակարանները: Հրդեհի հետևանքով այրվում է քաղաքի գրեթե կեսը:

Ինդոնեզական Յավա կղզու արևելքում գտնվող Սուտուկանի շրջանում 1987թ. մտցվել է արտասովոր հարկ: Այնտեղ մկները դարձել են իսկական դժբախտություն և՛ գյուղատնտեսության համար, և՛ քաղաքային բնակիչների համար: Սուտուկանի իշխանությունների կարգադրությամբ այսուհետև ամեն մի հեկտարի վրա պետք էր որսալ 75 մուկ և դրանք ներկայացնել կենդանի կամ սատկած վիճակում՝ ի ապացույց կատարած միսիայի: Ինչպես գրում է տեղական «Ներաչա» թերթը, Սուտուկանի ոչ մի բնակիչ չի կարող այսուհետև բանկից վարկ ստանալու, արտասահման մեկնելու, ինչպես նաև ամուսնությունը գրանցելու թույլտվություն ստանալ առանց մկնային հարկի «այդ նույն գումարով»՝ 75 կրծողների:

Չինաստանում գործում է օրենք, որի համաձայն այսօր երկրում հազվագյուտ համարվող պանդա բանբուկային արջերին ոչնչացնելու, ինչպես նաև մաքսանենգության մեջ մեղավորներին սպառնում է տասնամյա բանտարկություն կամ մահապատիժ:

1990թ. մայիսից Իրանում պատիժ է մտցված հանցագույլ Այաթոլլա Խոմեյնիի ասույթների աղավաղման համար: Թեհրանի ռադիոն հայտարարում է, որ Իման Խոմեյնիի աշխատանքները և հիշատակը պահպանելու վերաբերյալ օրենքում պառլամենտի ընդունած ուղղման համաձայն Խոմեյնիի ժառանգության ոչ ճիշտ շարադրման համար նախատեսվում է այնպիսի պատիժ, ինչպիսին մտրակով 74 հարված տալն է, երեք տարվա ազատազրկում և 500 հազար ռիալ (7000 դոլլար) տուգանքը: Թույլ տված սխալներով հրապարակումներն էլ ոչնչացվում են:

Իտալիայի քրեական օրենսգրքի 603-րդ հոդվածի համաձայն՝ բանտ են նետվում նրանք, ովքեր «ծառայում են սատանային», «աչքով են տալիս՝ չարակնում»: Իտալիայի իրավաբանները կատակում էին այդ հոդվածի վրա, բայց հանկարծ այն պետք եկավ, երբ մեղադրեցին դերասան Մաուրիցիո Արենային, որը չարակնել էր իշխանադուստր Մարիա Բեատրիչե դե Սավոյային և վերջինս ընկել է «սատանայի ցանցը», կախարդվել ու... համաձայնվել ամուսնանալ դերասանի հետ:

Կինս ապահարզան է պահանջում:
-Ինչու՞:
-Ասում է՝ արտաքին տեսքդ չի համապատասխանում նոր կահույքին:

... Վիեննային համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասախոսներից մեկը դիմում է բժշկական ֆակուլտետի պրոֆեսոր Ջեմմելվեյսին, որն ամենախիստ քննողի համբավ ուներ, հետևյալ բառերով.
-Թույլ տվեք հանդես գալ ի պաշտպանություն ձեր ուսանողների: Նրանք ձեզնից շատ են վախենում: Չէի՞ք կարող, արդյոք, մի քիչ մեղմացնել ձեր պահանջները:
-Ոչ մի դեպքում: Վատ պաշտպանի դեպքում հաճախորդը վտանգում է կորցնել փողը կամ ազատությունը, իսկ եթե բժիշկը վատ լինի, պացիենտը կարող է կորցնել կյանքը:

Վիրջինիա նահանգում կատեգորիկ արգելված է քննադատել հրշեջներին նրանց կողմից իրենց ծառայական պարտականությունների կատարման ժամանակ: Թեմնեսում այդ օրենքն ավելի «դեմոկրատական» է. այնտեղ կարելի է ոչ միայն քննադատել հրշեջներին, այլև ամուսններին թույլատրվում է մարմնական պատժի ենթարկել կանանց: Դիշտ է, պայմանով, որ նրանք պետք է իրենց կանանց ծեծեն ցախավելի ոչ հաստ փայտով:

Կենտուկի նահանգում օրենքը տղամարդուն թույլ չի տալիս ամուսնանալ իր նախկին կնոջ տատիկի հետ, իսկ մեկ այլ օրենքով չի թույլատրվում, որ տարբեր սեռի անձինք, ովքեր ամուսնական կապերով կապված չեն, մտեն հասարակական վայրերի նստարաններին մեկը մյուսից 15 սանտիմետրից մոտիկ:

ԱՄՆ-ի 17 նահանգներում մահապատիժը թույլ է տրվում նույնիսկ 18 տարեկանից ցածր անձանց համար, իսկ Ինդիանա նահանգում Էլեկտրական աթոռին կարող է հայտնվել անգամ 10 տարեկան երեխան:

Ավստրալիայի Շերբրուկ կոմսության խորհուրդը իր տիրապետության տակ ունի Մելբուրն քաղաքի մոտ գտնվող հսկայական տարածության անտառ: Խորհուրդը որոշել է Ավստրալիայի պատմության մեջ առաջին անգամ մտցնել պարետային ժամ... կատուների համար: Այսուհետև, երեկոյան ժամը 8-ից մինչև առավոտյան ժամը 6-ը կոմսության բոլոր կատուները պարտավոր են մտնել փակի տակ, իրենց տերերի տներում: Նման խիստ միջոցը կիրառվում է

այն կապակցությամբ, որ այդ անվնաս թվացող տնային կենդանիները գիշերվա մթության մեջ հասնում են արգելանոց, ոչնչացնում պատահած մանր կենդանի ամեն մի էակի:

Որպես մահվան դատավճիռներն ի կատար ածելու միջոց՝ գիլյոտինը առաջինը Ֆրանսիայում կիրառվել է 1792թ.-ին:
Սկսած 1958 թվականից՝ Հինգերորդ հանրապետության գոյության ժամանակ, գիլյոտինը վերջ է տվել 17 հանցագործների կյանքի: Քանի որ Ֆրանսիայում շարժում է սկսվել մահապատիժը ցմահ բանտարկությամբ փոխարինելու ուղղությամբ, ուստի երկրում մահապատիժը վերացնելու դեպքում գիլյոտինը կարող է դառնալ ֆրանսիական թագավորների էքսպոնատ: Իսկ հասարակական կարծիքի հարցումը ցույց է տվել, որ հարցվածների 54 տոկոսը դեմ է մահապատիժը վերացնելուն: Նրանք վախենում են վտանգավոր հանցագործությունների կտրուկ աճից:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99
 Ֆաքս՝ (374 10) 58-02-99
 Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
 Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝
 03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
 Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ»
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
 Ծավալը՝ 1 տպ. մամուլ
 Ստորագրված է տպագրության
 24.12.2007թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից